

րուրդ գիշերը, և կը համարին Աստուծոյ ճշմարիտ պաշտօն մը մատուցանել:

Ապա կը փնտռեն երկրորդ անմեղը, որուն անունն էր Կարապետ. կը գտնեն զինքը ճանապարհին վրայ՝ որ կ'երթար Ոստան, կը վախցնեն սպառնալիքներով, որ ուրանայ գրիւստուս: Սա ևս արիարար կը մարտիրոսանայ Ոստան քաղաքին մէջ և իւր սուրբ նշխարները կ'այրեն այլազգիք:

Այս ամէնը կը կատարուի, կ'ըսէ Յայսմաւուրք, «ի րժպկանիս մերում ԸՂ՝ և ՄԲ՝ ամիւն (852 = 1403):

Ո. Կ.

ՍՄԱՅԱՆԻ ԶԱՅԱՐՄԱՅԱԼ ԳԱՆՈՐԸ

(ԱՅԷ-ՔԷՐԷՆԻ - ՊԵՐՏԷՆԻ ՌԱՍՏԱՆԻՔԷՐԷՆԻՆԻ)

(Շարունակութիւն տես Բազմ. էջ 233)

1. Սուրբիսաններ. — Սրանք Վաստիկանի տանուտէր Տէր - Սուքիասի շառաիղն են կազմում: Այս տոհմից քիսա (տանուտէր) Մարտիրոսը, Դուկասի որդին, Վաստիկանից հեռու նալով՝ հաստատում է Ամադաբադ գիւղում, ուր և նշանակում է քեադիուդա, Նա աշփէ է ընկնում ժողովրդին մատուցած ծառայութիւններով: Սրա օրով ժողովուրդն ապրում է խաղաղ հանգամանքների մէջ և նւիրում իր ստեղծագործական աշխատանքին: Մարտիրոսին յաջորդում է որդին Աւետիք. սա ազնիւ, վեհանձն և առատաձեռն մի տանուտէր է լինում: Իր ամբողջ կեանքը նւիրում է նա ժողովրդին և սիրելի դառնում ամենքին: Նոյնպէս սրա ժաւանակ գիւղացիներն ապրում են խաղաղ պայմանների մէջ: Աւետիքից յետոյ Սուքիասեանների տոհմը կորցնում է իր իշխանութիւնը:

2. Ղարախաններ. — Զահարմահալի մեծ տոհմիցից են Ղարախանները, որոնք սերում են քիսա Ղարախանից (Գրիգորից). սա 1606 թւի տարագրութեան ժամանակ, իր ընտանիքով, գաղթում է Սպահան և հաստատում Սիրաքում: Ղարախանը ազնիւ, առաքինի, շքեմեանդ և հիւրասէր մի տանուտէր լինելով՝ գիւղում մեծ

պատիւ և յարգանք է վայելում: Նրա միակ մտածմունքը լինում է իր ժողովրդի երջանկու թիւը, որի համար նա անում է մեծամեծ գործեր: Սիրախանի Ղարախանի գեղեցիկ յատկու թիւններից մէկն էլ նրա անսահման հիւրասիրութիւնն է լինում: Նրա տան դռները բաց են լինում ամենքի առաջ: Մի և նոյն ժամանակ նա բարութեան տիպար է լինում. աղքատ ընտանիքներից շատ անգամ օգնում է և սփոփում նրանց վշտերը: Ղարախանին յաջորդում է որդին Նազար, որ հօր նման օժտւած է լինում մի շարք բարեմասնութիւններով: Նա համեստ, առաքինի և ժողովրդասէր տանուտէր լինելով՝ ամբողջապէս նւիրում է ժողովրդի բարօրութեան և պաշտպանում նրան հարստահարութիւններից և կեղծութիւններից, Նազարից յետոյ տանուտէր է նշանակում նրա որդին Խուդադադ, որ ընթանում է հօր շուրջով: Ժողովրդի հանգստութեան համար նա ամեն ջանք թափում է և միաժամանակ օգնում աղքատներին և չքաւորներին: Խուդադադ ունենում է չորս որդի՝ Խէչիկ (խաչատուր), Սիմէօն, Մկրտիչ և Մկրտում, որոնք յաջորդաբար քեադիուդա են նշանակւում և հաւատարմի մնալով իրենց կոչման՝ անձնւիրաբար վարում իրենց ստանձնած պաշտօնները: Քիսա Մկրտումին յաջորդում է որդին Ահմար (Եսայար). սա իբրև տանուտէր իր պաշտօնը մի որոշ ժամանակ վարելուց յետոյ, 1868 թ.ին, ուխտի է գնում Ս. Էջմիածին: Վերադարձին ներկայանում է պարսից Նասրէդդին շահին: Թագաւորը նրա հաւատարմի ծառայութիւնը գնահատելով՝ նւիրում է «խոր - շիդ» շքանշան և շնորհում է «Եսայարի» (250) մարդի զինաւոր տիրույթը հետեւել հրովարտակով:

«Ռոլովհետեւ Մեծապատիւ քրիստոնեայ Մէհրար Բէկը, Սպահանի Զահարմահալ գաւառի մեծ Ղարախանի թոռը, հայ ժողովրդի հանգստութեան և պահպանութեան համար ամեն ջանք գործ է դրել և Սրա տոհմը սերնդից սերունդ ծառայել է մեր տէրութեան, ուստի Սա արժամատւում է թագաւորի շնորհիմ, պարգևատրւում է Սրա ճշմարտութիւնը շքանշանը և շնորհում է «Եսայարի» աստիճան - տիտղոսը:

Ձի հաջիւ իւ հարամ,

1280.

Այժմ Եսայարի բնակւում է Նոր-Ջուղայում, ուր նա անց է կացնում իր կեանքի վերջին շրջանը: Մահաբի պաշտօնը Սիրաքում վարում է նրա հօրեգործորդին՝ Սամէլը: Ազնիւ, բարեսիրտ և հիւրասէր մի տանուտէր է նա. համարեա

ամբողջ հոգով և օրտով նւիրած է իր ժողովրդի երջանկութեանը։ Ուսարհարան ամէն մի ճանապարհորդ վայելում է նրա օջախի բարութիւնը։ Մեր ճանապարհորդութեան ընթացքում ինչպէս նեցինք նրա տանը և նա մեր ուսումնասիրութեան համար իր անշուք մատենանքսունց մի շարք կարևոր տեղեկութիւններ։

3. Բաբունահաներ կամ Խոշորաբախնահաներ. — Այս տոհմի ամենատառնիկն նահապետն է քիխա Խուզաբախը, Մամուքայի տանուտէրը, որ իր անաչառ և անխարդախ բնաւորութեամբ սիրելի է դառնում ժողովրդին։ Նա միշտ իր ժողովրդի մասին է մտածում և նրա հանգստութեան ու երջանկութեան համար ոչ մի միջոցի առաջ կանգ չի առնում։ Խուզաբախին յաշորդում է որդին քիխա Բաբում, որ կանգնած իր կոշման բարձրութեան վրայ՝ անմեղքաբար ծառայում ժողովրդին և իր ետեք թողնում մի բարի յիշատակ։ Բաբումից յետոյ քաղախուդայութիւնն անցնում է նրա Ալվադ որդուն. սա ընթացում է հօր շաւղով և անգին ծառայութիւններ է մատուցանում ժողովրդին։ Ալվազից յետոյ քիխա է նշանակում որդին Ազգար, որ աչքի է ընկնում իր համեստ, ազնիւ և ազգասէր ոգով։ Նա միշտ պաշտպան է հանդիսանում իր ժողովրդին և մինչև իր մահը ծառայում նրա շահերին և բարութեանը։ Աբգարին յաշորդում է Յովհաննէս որդին, որ իր անկեղծ և անխարդախ գործունէութեամբ բարձր է պահում իր ազգատոհմի անունն ու պատիւը։ Յովհաննէսի մահից յետոյ քիխա է նշանակում նրա Մինաս որդին, որ ապրում է միշտ ժողովրդի մէջ և պաշտպանում նրա իրաւունքներն ու շահերը։ Նրա մահով վերջանում է Խուզաբախնահաների քիխայութիւնը։

4. Ոհաննահաներ կամ Դաւաթրեւաններ. — Այս տոհմի նոյնպէս էր և Չահարմահալի նշանաւոր ազգատոհմերից մէկը. սերում են Գիշնիգանու տանուտէր Օհանից, որ գաղթել է Բասենից։ Սրա օրով վրանաբնակ դաշղէյինները աշխատում են հարստահանել գիւղացիներին։ Օհանը պատենէշ է հանդիսանում նրանց և մինչև իր մահը հայրաբար կառավարում ժողովրդին։ Օհանից յետոյ քիխա է նշանակում նրա որդին Դաւութ. սա խելօք, ճարտար, ազնիւ մի տանուտէր է լինում։ Նա ամբողջապէս նւիրում ժողովրդին և կատարում իր վրայ դրած պարտականութիւնները։ Դաւութից յետոյ յաշորդում է որդին Մկրտիչ, որ Մամուքայի քիխա է նշանակում։ Նա աչքի է ընկնում իր ազնիւ և անշահախնդիր բնաւորութեամբ և զօրավիգ է լինում

նրա ժողովրդի երջանկութեան։ Մեռնում է Վեւրիւն-Քոնարքում։ Այնուհետև քիխա է դառնում Մկրտիչի որդին Մկրտում, որ իր համեստ բնաւորութեամբ և մատուցած ծառայութիւններով սիրելի է դառնում ժողովրդին։ Մկրտումին յաշորդում է որդին Մանուկ, որ այժմ Զածի-Քոնարքի տանուտէրն է։ Տարաբախտաբար նա էլ կանգնած իր կոշման բարձրութեան վրայ։ Նրա մասին գիւղացիներից մի շարք գանգատներ լսեցինք։

Ահա օրանք են Չահարմահալի հայերի նշանաւոր ազգատոհմերը։

Հայերն այժմ գետեղած են 14 մեծ ու փոքր գիւղերում։ Ընդ ամէնը 767 տուն են, 3485 շնչով, որից 1734ը արական է, իսկ 1751ը իգական։ Ճիշդ է գաղթական այդ բնակորներն ունին իրենց ուրոյն սովորութիւնները, ծէսերը, նախապաշարարմունքներն ու հաւատալիքները, բայց դարերից ի վեր ապրելով պարսիկների, բախտիպացիների և թօթքերի հետ՝ կորցրել են իրենց ուրոյն յատկանիշներից շատ բան։ Նրանք լօտերի և պարսիկների նման են հագնւում, ածիւում և կերակւում։

Ունին իրենց առանձին բարբառը, որ սակաւ փոփոխութեամբ պատկանում է Արարատեան բարբառին։ Այդ գաւառաբարբառի վրայ սակայն նկատւում է պարսկերէնի ազդեցութիւնը։ Պարսկերէնից փոխ առնւած բառերն ու արտայայտութիւնները բարբառն այնպէս են կերպարանափոխում՝ որ յիշել գաւառաբարբառը չիմացողի համար խօսակցութիւնը շատ անգամ դժւարահասկանալի է դառնում։

Չահարմահալիցիները գործ են ածում նաեւ պայմանական կամ գաղտնի լեզու, որպէս գիւղենց խօսակցութիւնը օտարներին անհասկանալի լինի։ Ահա մի քանի նմուշներ. «Ծուտ լեզուս պարսիկ», «Կեռ պոչ — տանիկ կամ պարսիկ», «Կոտրած կնուճ — սէիդ», «սատանի գանգ — դէւուի», «էրկան համբայ — Մէշէդ», «Մէ կուլ — մի դուստ», «մտաճ — մի շայի», «մէ կօսդ — մի թուան», «դան — ցորեն», «ջորին կոտորում է — գարի», և այլն։

Կյուզմաճըք. — Չահարմահալի հայ գիւղացիները — թէ՛ տղամարդիկ և թէ՛ կանայք — մեծ ծամաւնութեամբ միջնաստակ են, պնդակազմ, յաղթանաղամ, քաջառողք և թիկնաւէտ. ունին լայն կուրծք, ուժեղ բազուկներ, լիքը ազդերի, թուի երես, թանձր յօնքեր, սև մազեր, սև կամ կապոյտ աչքեր և բաւական գեղեցիկ դիմագիծ։ Սովորականից գէր կամ նիհար մարդիկ շատ քիչ

են պատահում: Իսկ այլակերպությունը տեղային ազգաբնակչության մարմնակազմությունն մէջ նըկատելի է, որ արդիւնք է սփիւրիզ տարափոխիկ հիւանդութեան: Սոյն հիւանդութիւնը Չահարմանալու մօտաւորապէս 100 տարւայ պատմութիւն ունի, որ գիւղացիները բերել են հնդկաստանից, Թէհրանից և շրջակայ գիւղերից:

Բնկորագրութիւնը. — Չահարմանացիներն ընդհանրապէս բնաւորութեամբ մեղմ են, քաղցրաբարոյ, հանգալու, աշխատասէր, եռանդուն, տոկուն և չարքաշ: Սակայն նրանք գտնւելով դարւորոր ճնշումների և պարսկական անմիջական ազդեցութեան ներքոյ՝ կորցրել են իրենց հոգեկան բարեմասնութիւններից և լաւ յատկութիւններից շատ բան և իւրացրել մի չարք քայքայական գծեր և ստոր հակումներ, օր. կեղծիք, շողոքորթութիւն, խորամանկութիւն, խաբարարութիւն, և այլն: Պատկերիկ կատարեալ կը լինի՝ եթէ սրանց վրայ աւելացնենք նրանց միմեանց քայքայելու և զնասելու տենչը, ձգտումը: Չկայ նրանց մէջ անկեղծ, փոխադարձ սէր, բարեկամական սերտ յարաբերութիւն: Այդ է պատճառը, որ նրանք ամենաշինի ընդհարումների ժամանակ վազում են խանին կամ զարէթին գանդատի: Գրանով, ի հարկէ, նրանք միմեանց տներն են քանդում, միմեանց կենտրոն դռնացնում ու թունաւորում... Խանը կամ զարէթն օգտւելով հանդամանքից՝ երկու կողմից էլ սուլանք է առնում: Այս բոլոր տխուր երեւոյթների առաջն կարելի է առնել միայն և միայն շուաւադաւանութիւնը:

Չրադուռներ. — Չահարմանալի գիւղացիները գլխաւոր գաղափունքները կազմում են երկրագործութիւնն ու անասնապահութիւնը: Այժմ նրանք Չահարմանալում բնակւող բնակիչների մէջ ամենալաւ ու աշխատասէր երկրագործներն են: Մշակում են գլխաւորապէս հացադոյսեր և ուրիշ օգտակար բոյսեր: Սակայն անասնապահութիւնը հայ գիւղացիների մէջ երկրագործութեան չափ զարգացած չէ. տարածած է միայն ոչխարապահութիւնը և ձիաբուծութիւնը: Ոչխարապահութիւնից նրանք այնքան մեծ օգուտ չեն ստանում, իւրաքանչիւր տուն իր պահած կովիկաններից պատրաստում է միայն ընտանիքի անհրաժեշտ պահուիքները — մածուն, չորածան, իւղ, սեր, կարագ, և այլն: Այս էլ նկատենք, որ գիւղացիների ամենանշան մասը միայն ունի մեծ քանակութեամբ ոչխար, այծ, ձի, կով, եզ: Բացի երկրագործութիւնից և անասնապահութիւնից՝ Չահարմանալում զարգացած է տնայ-

նագործութիւնը (տնային մանր արդիւնագործութիւնը): Կանայք տներում պատրաստում են զորգ, կարպետ, թաղիք, շէշիմ, սոպակ, և այլն:

Մեղաբուծութիւնը ևս պակաս զարգացած չէ Չահարմանալում. համարեա իւրաքանչիւր տուն ունի իր փեթակը 1-6: Այգեգործութիւնը իբրև գիւղատնտեսական շահաւէտ մի ճիւղ՝ վերջերս զաւառում նկատելի կերպով ծաւալւում է Բայց այգեմշակութիւնն այստեղ սահմանափակում է միայն խաղողի մշակումով: Առացած խաղողից գիւղացիները պատրաստում են գինի, օղի կամ չիբա և կամ չորացնում, չամիչ են պատրաստում: Կան նաև բաւական խոշոր թւով խօշուրդներ, այսինքն դժբախտ գիւղացիներ, որոնք չքաւորութեան պատճառով երկրագործութեամբ չեն զբաղւում և իրենց օրերն անց են կացնում հիւսնութեամբ, մտագործութեամբ, քարտաշութեամբ, որմնադրութեամբ, դարբնութեամբ, շաղագանդութեամբ, սափրիչութեամբ, գրարուծութեամբ, չորաղարութեամբ և այլ մանր գործերով: Նրանցից մեծ մասը պանդխտում են գալ նազան կենտրոններ՝ աշխատանք գտնելու համար: Չահարմանալում աչիք են ընկնում նաև երկրագործական բանւորները, որոնք վարում, ցանում, հնձում են իրենց համալրակցու արտերը, նրա անասնուով, գործիքներով և սերմահատիկով և ստանում են բերքի՝ մասը: Փիւղերում կան նաև քիչ թւով խանութպաններ, որոնք գիւղական ժողովրդի պահանջների համեմատ ծախում են զանազան տեսակի ապրանքներ:

Կրօնը. — Չահարմանալի հայ գիւղացիները բոլորն էլ Լուսաւորչական են. բողոքական և կաթողիկ հայեր համարեա թէ չկան: Ընդհանրապէս նրանք եկեղեցատէր և կրօնամոլ ժողովուրդ են. ամենայն սրբութեամբ կատարում են իրենց կրօնական պարտականութիւնները և սոսնում եկեղեցական տօները, որոնց ժամանակ եկեղեցին լցում է երկսեռ խումբ բազմութեամբ:

Էկեղիցիւն. — Ընդամենը տասն եկեղեցի ունի Չահարմանալը, որոնք կանգուն են: Եկեղեցի ունեն Մուշիզան, Շարբուլազ, Բալդուլու և Դէշէն գիւղերը: Ընդհանրապէս եկեղեցիները չնւաճ են գիւղերի ճիշտ կենտրոններում. դրանք թէ՛ ներքուստ և թէ՛ արտաքուստ պարզ և անշուք շինութիւններ են, բայց առանձնապէս գեղեցիկ են Մամուռնի, Ալբուլաղի, Մամուլաղի և Սիւրաքի եկեղեցիները, որոնք պատիւ են բերում

տեղացի գիւղացիներին: Տնտեսական տեսակէտից եկեղեցիները աննախանձելի վիճակի մէջ են. չունեն շարժական և անշարժ կապքեր, նրանց եկամուտները կազմում են ժողովրդական նւէրները:

Քահանաները. — Չահարմանալը հարուստ է քահանաների կողմից. համարեա բոլոր մեծ գիւղերն էլ ունին իրենց քահանաները, միայն մի քանի փոքր գիւղեր չունեն, նրանք էլ օգտւում են մօտակայ գիւղերի քահանաներից: Այժմ Չահարմանալում կան 2(1) քահանաներ: Ահհա, սարանք նրանք, բացառութեամբ մի քանիսի, սահմանափակ կրթութեան և զարգացման տէր են և համարեա ոչինչ հասկացողութիւն չունեն հասարակական, գրական և այլ խնդիրների մասին, որով առարկայական ոչ մի դեր չեն կատարում հասարակական կենսքում: Նրանցից շատերի համար գոյութիւն չունեն ժողովուրդ, դպրոց, լուստարութիւն: Այդ է պատճառը, որ նրանք կորցրել են իրենց բարոյական հեղինակութիւնը ժողովրդի առաջ:

Գործակալ-քահանաները. — Չահարմանալի հոգևոր-եկեղեցական գործերը վարելու համար նշանակւում են երկու գործակալ — քահանաներ, որոնց պարտականութիւններն են հսկել կրօնական, եկեղեցական, դպրոցական և այլ խնդիրներ վրայ: Նրանք ընտրւում են Պարսկա — Հնդկաստանի թեմական առաջնորդի կողմից և ղեկավարւում են որոշ ծրագիր — կանոնագրով: Այժմ գաւառի գործակալ — քահանաներից մէկը Տէր — Յուսիկ քհնյ. Տէր — Սարգսեանն է, որի հսկողութեան և տրամադրութեան ներքոյ են գտնւում Մամուքա, Հաճիաբադ, Բալըղու, Սիրաք և Ամադաբադ գիւղերը, իսկ միւսը՝ Տէր — Եզնիկ քհնյ. Յակոբեանն է, որի ձեռքում են վերին — Բոնաբը, Յաժի — Բոնաբը, Մուխդան, Շահբուլաղ, Լիվասեան, Մամուռան, Աղբուլաղ, Մինազան և Դէշլէի գիւղերը:

Որպէս զի գործակալ — քահանաներն անթերի կերպով կատարեն իրենց պարտականութիւնները, թեմական առաջնորդ Սահակ Արք-եպիսկոպոսականը գծել է մի կանոնագրութիւն, որի էական մասերն են.

Ա. հսկել Զահարմանալ գաւառի գիւղերի եկեղեցիների բարեկարգութեան և բարելաւութեան վրայ ու առանց զանցաւորութեան և թիրացման կատարել սուրբ եկեղեցու ժամբարդութիւնը.

Բ. քահանաները պարտւմ առանց զանցաւորութեան մի մատենանի մէջ արձանագրել ամէմ մի ծնունդ, մկրտութիւն, պրակ և մահ.

Գ. քահանաները պէտք է աշաւուրջ հսկին երեցփոխների վրայ, որ եկեղեցական հաշիւը ճշտութեամբ և կամոմաւորապէս արձանագրեն:

Դ. Պսակաղիք քահանամ միմէն որ գործակալից թոյլտւութիւն չստանալ, իրաւունք չունի պատկելու:

Ե. գործակալ քահանաները իրաւունք ունին գիւղերում պատահած ամախորժ խնդիրները քնննելու և վճիռ արձակելու:

Զ. Պէտք է հոգ տանեն բոլոր քահանաները գիւղերում գտնուող ազգային դպրոցների բարգաւաճման գործին:

Է. գործակալները պարտւմ իրենց պաշտօնը արժանաւորապէս կատարել և չխեղաւորալ:

Աւելորդ է ասել, որ գործակալ — քահանաները շատ ազգամ չարալար են գործադրում իրենց յանձնած պաշտօնը և աւելի տանջանք պատճառում արդէն տանջած գիւղացիներին:

Վիեննա

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

(Շարունակելի)

ԱՆԻՒ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ՆԵՐԿԱՆ

Անիի աւերակներուն մէջ ուխտաւորն ելու յատուկ բնակարան մը կար ժամանակին, որ յանձնուած էր լեռնցի բարի վանականի մը՝ Միքայէլ վարդապետի հսկողութեան: Ղարաբաղի այս եռանդուն վարդապետը՝ իր այցելուներուն տրամադրութեան տակ դրած էր Տօմար մը, որուն մէջ այցելուները կը գրէին իրենց կրած տպաւորութիւնը: Չեմ յիշեր ո՞ր այցելուն այդ Տօմարին մէջ նշանակած էր, թէ « Անի թաւաքարն մըն է »:

Եւ չէր չափազանցած:

Այո, Անի թաւաքարն մըն է, ուր դարերէ ի վեր կը պահուին հայկական գեղարուեստի հսկայական կոթողները, որոնք զարմանք կը պատճառեն նոյն իսկ Եւրոպացի գիտնականներու:

Անիի գեղարուեստական շինութեանց վրայ գիտնականներու ուշադրութիւնն հրաւիրող առաջին հմուտ և պատրաստուած ճամբորդն եղած է Ker Porter Անգլիացին, որ 1817ին այցելած է Անին: Ասոր